«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՌԵԿՏՈՐ

27 սեպտեմբերի 2021թ. N 190

ՀՐԱՄԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԵԿՏՈՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 25 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ համալսարան) գիտական խորհուրդի 2021 թվականի սեպտեմբերի 25-ի N 4-1 որոշումը.

1. Համալսարանի ռեկտորի 2021 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» N 25 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) հրամանով հաստատված ներքին կարգապահական կանոնների (այսուհետ՝ կանոններ) 4–րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Համալսարանում աշխատանքային կարգապահության երաշխիք են գործատուի կողմից անհրաժեշտ կազմակերպական և տնտեսական պայմանների ապահովումը, ինչպես նաև բարեխիղճ աշխատանքի խրախուսումը և աշխատանքային կարգապահությունը խախտողների նկատմամբ կարգապահական ներգործության համարժեք միջոցների կիրառումը, առանց որևէ խտրականության՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից,

աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:»:

2) կանոնների 24-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8 և 9-րդ ենթակետերով.

«8) աշխատանքի ներկայանալիս համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժին ներկայացնել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը,

9) սույն կետի 8-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում համալսարանի ռեկտորին ներկայացնել գրավոր բացատրագիր (զեկուցագիր)».

3) կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 24.1 կետով.

«24.1. Մինչև սույն կանոնների 24-րդ կետ-ի 8-րդ ենթակետով նախատեսված պարտականության խախտումը վերացնելը յուրաքանչյուր աշխատանքային օր աշխատանքի ներկայանալը համարվում է որպես առանձին (ինքնուրույն) կարգապահական խախտում:»:

4) կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 28.1 կետով.

«28.1. Համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը ապահովում է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող

փաստաթղթերի ստուգումը աշխատանքի ներկայանալիս, ինչպես նաև սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարումը և դիտարկումների իրականացումը:

Համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում առերևույթ խախտում թույլ տված անձի վերաբերյալ տվյալները մեկ աշխատանքային օրվա ժամկետում ներկայացնում է համալսարանի ռեկտորին:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հոկտեմբերի 01-ին:

Ռեկտոր՝ Դ.ԳԱԼՈՅԱՆ

27 սեպտեմբերի 2021թ.

ք. Երևան